

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուշկարիոյ համար տարեկան 12 գրանի
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐՆԼԻ

Համակ դրամ եռայնի դրկել հետեւեալ հասցեով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՐԱՌՈՒՆԵՔ ԼՐԱԳՐՈՑ ՎԱՐՆԱ (ՊՈԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ չեն ընդունիր եւ յարմար դասաւոր-
մանը միայն կը հրատարակուին անբող-
ջովի կամ ինքնակամ:
Դասնունգում տողը 20 սանթիմ. երե-
փեւ անդի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ՈՒՂԻՂ ԴԱՏԵՆՔ

Ա.

Ամէն տեղ եւ ամէն ժամանակ
հանրային աղէտի մը պարագային
մէջ՝ փնտրուող եւ չարչարուող ժո-
ղովուրդը քառութեան նախագ մը
կը փնտռէ, անձ մը կամ շրջանակ
մը, որուն վրայ կարենայ կեդ-
րոնացնել աղէտը արտադրող պատ-
ճառները, որպէս զի առարկայ մը
գաւաթ ըլլայ իր գայրոյթը թա-
փելու: Անհաւան չերեւիր այս,
ճիշդ ինչպէս անհասկնալի չենք
գտներ այն մարդուն ընթացքը,
որ ու է պատճառով վշտացած եւ
զայրացած՝ առաջին անգամ իրեն
պատահող անմեղի մը վրայ կը փո-
ճուի մասամբ զովացնել զինք տու-
չորող ցասումին կրակը:

Այս ընթացքին մէջ արդարու-
թիւն չկայ անշուշտ, ոչ ալ տը-
րամաբանութիւն: Բայց յուզման
վայրկեանին ուղղախոհութիւն եւ
ցասումի ժամանակ արդարակրու-
վութիւն չի կորսնցնել հազուա-
դէպ մարդերու յատակ է: Հազ-
ուադէպ մարդերէ կազմուած ժո-
ղովուրդ մ'ալ մինչեւ իսկ երեւա-
կայել անկարելի է:

Ինչ զարմանք ուրեմն որ հայ
ժողովուրդն ալ, վերջին տարիներ
րու անօրինակ հարուածներէն իր
բարոյական եւ նիւթական գոյու-
թեան պայմաններուն մէջ ահաբե-
կիչ ցնցումներու ենթակայ ըլլա-
լով եւ չի կրնալով ոչ թուրքին
բարբարոսութեան եւ ոչ Եւրոպայի
գիւտնադիտութեան եղեռնապարտ
անտարբերութեան դէմ զինուելու
սպառնալ, նուազ հզօր յանցաւոր-
ներ որոնց որոնց դէմ կարենար
ուղղել իր գայրոյթի սուր պաք-
ները, Շուտով գտնուեցաւ յանցա-
ւորը, հայ յեղափոխականը: Ան-
էր որ առանց հարկաւոր նա-
խապատրաստութեան, առանց ժո-
ղովուրդին մէջ յեղափոխական խը-
մուր եւ ոյժ գոյացնելու եւ առաջ
տեղութիւններուն քաղաքականու-
թեան խորը նշմարելու, անար-
գարանալի տղայամտութեամբ եւ
զատապարտելի յանձնապատա-
նութեամբ ելաւ ազգը փրկելու:

առիւն քանի մը հրացան, անդին
քանի մը ռումբ արձակելով. կատ-
ղեցուց թուրքը եւ փոխանակ ազ-
գը փրկելու, անոր ջարդուելուն
պատճառ եղաւ: «Անկցի յեղա-
փոխականը» ազադակը լսուեցաւ
ամէն կողմէ:

Փութանք անմիջապէս յարել թէ
այս տողերուն նպատակը չէ ջա-
տագովել մեր յեղափոխական շար-
ժումները եւ ոչ ներկայացնել մեր
յեղափոխականները իբր պատաս-
խանատուութենէ ազատ անմեղ-
ներ, զորս իբր քառութեան նու-
խաղ ընտրած ըլլայինք: Բնաւ:
Ո՞վ չի տեսաւ մեր սարքած յեղա-
փոխութեան սխալները, թիթե-
ւամտութիւնները եւ զեղծումները:
Ո՞վ կրնայ ուրանալ տիւրը եղե-
լութիւնները, որոնք երբեմն յե-
ղափոխութեան քօղին տակ ծած-
կուած՝ այսօր արդէն մերկապա-
րանոց եղած են:

Սակայն մ'ենք համակարծիք
չենք անոնց որ այս ամէնուն պա-
տասխանատուութիւնը պարզապէս
մասնաւոր անհատներու, ըսել կու-
զենք, յեղափոխականներու վրայ
կը նետեն, եւ միմիայն անոնց վրայ
եթէ իրերը բիչ մ'ալ խոհու-
նութեամբ զննենք, պիտի տես-
նենք թէ սխալ է խորհելու այդ
եղանակը եւ սխալ մը՝ շատ վտան-
գաւոր տեսակէն:

Պատասխանատուութեան մէջ ա-
մէնքս ալ բաժին ունինք. թէ-
պէտ նոյն իսկ իւրաքանչիւրիս
բաժինը ըլլայ հիւլէի մը հաւա-
սար, ոչ յեղափոխականներու ա-
հագին մեծամասնութեան այդ ա-
մենաշնչին պատասխանատուու-
թիւնները մէկ տեղ գալով կը
կազմեն սոսկալի գումար մը:

Ճշմարտութիւն մ'է այս, զոր
պէտք է եւ մանաւանդ ժամանակն
է վեր հանելու, որպէս զի ինք-
նախաբէութեան մէջ չիյնանք:

Եթէ կրցինք լուսաւորուել այս
մասին եւ որոշ եղբակցութեան
մը յանգիլ, արդէն շատ մեծ շահ
մը ունեցած պիտի ըլլանք. որով-
հետեւ ատով միայն պիտի կրը-
նանք ապահով ըլլալ թէ ալ չպի-
տի կրկնուել այն սխալները զոր
այսօր կողքանք: Ատով սակայն

պիտի համոզուինք միանգամայն
թէ ամէն պատասխանատուու-
թիւն չծանրանար միայն ու մի-
այն յեղափոխականին վրայ զոր՝
մեր գայրոյթի առաջին զօրեղ
ժայթքումները հանգարտելէ ետ-
քը, պիտի ստիպուինք միակ յան-
ցապարտը չի նկատել եւ դադրել
միայն անոր թերութիւնները ձող-
կել: Չարդարացնենք զայն, բայց
ճանչնանք ու խոստովանինք մեր
թերութիւններն ալ:

Ինչպէ՞ս:

ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Հանրային գործի մը գլուխ
անցնելով դժուար բան է առհասա-
րակ ամէն երկրի մէջ եւ մասնա-
ւորապէս մեր մէջ, որովհետեւ
անկարելի է տարբեր ուղղութիւն-
ներու ներկայացուցիչ կուսակցու-
թիւնները եւ անոնց իրարմէ քիչ
տարբերութիւն ունեցող բաժա-
նուները կամ երանգները գոհա-
ցընել:

Դժգոհները կը ջանան յարու-
ցանք գործողին դէմ արգելքներ
կամ դժուարութիւններ որոց դէմ
մաքաւել յաճախ կը նշանակէ ան-
քուն գիշերներ եւ վրդովուած օրեր
անցընել: Ուրիշ կերպ ալ կարելի
չէ, քանի որ կեանքը պայքար է,
ինչ որ ճշմարիտ է ոչ միայն ան-
հատական, այլ եւ հանրային ձեռ-
նարկելու եւ նպատակներու համար:

Գերազանցապէս հանրային ձեռ-
նարկ մ'է լրագրութիւնը: Թերթե-
րը ժողովրդին մէջ գոյութիւն ու-
նեցող տարբեր ուղղութիւններու
ներկայացուցիչներն են եւ հետեւա-
բար իրենցմէ իւրաքանչիւրը հա-
կառակ կուսակցութիւններու հար-
ուածներուն ենթակայ:

Սակայն, մենք կը կարծենք թէ
գոնէ մեր մէջ դժուարագոյն եւ ա-
մէնէն փշալից դրութիւնը այն
թերթերունն է, որոնք իրաւունքին
պէս, մեր յեղափոխական կուսակ-
ցութիւններէն ոչ մէկուն կը վե-
րաբերին, այսինքն, ոչ Հնչակեան
են, ոչ Դաշնակցական, ոչ Ար-
մէնիական եւ ոչ ալ Միութեանա-
կան, այս վերջին բաւին սեղմ,

խելքի եւ տրամաբանութեան դէմ
ընդվզող եւ իրարու տրամադժապէս
հակառակ սկզբունքները թռնի ի-
րարու հետ միացնելու նկրտող ի-
մաստով:

Ասանկ թերթ մը ինքզինք բը-
նականաբար անկախ ու անկողմնա-
կալ կը նկատէ կուսակցութիւննե-
րու հանդէպ ու կը յայտարարէ
զայդ:

Անկողմնակալ. ա՛ռ գլխուդ
փորձանքը. անձրեւի նման տեղա-
տարափ կը թափին պահանջներ,
դիմումներ՝ բոլոր կուսակցութիւն-
ներու դէմ՝ ամէն տեսակ յարձա-
կում, ամէն տեսակ քննադա-
տութիւն հրատարակելու: Չէ՞ որ
անկողմնակալ հրատարակած եւ
թերթը. չէ՞ որ ոչ մի կուսակցու-
թեան կը վերաբերիս, պէտք է
որ չմերժես ու է կուսակցութեան
դէմ՝ ուղղուած ոչ մի գրութիւն:

Թայտնի է որ այսօրինակ պա-
հանջներ կը բղխին այն շրջա-
նակներէ որ անկողմնակալութիւնը
իր լուրջ իմաստով ըմբռնելու ան-
կարող, կը շփոթեն զայն ամէնուն
դէմ անպայման կուսելու պատ-
րաստականութեան հետ, կուսելու
հետ կուսելու նպատակով, հար-
ուածելու հետ հարուածած ըլլալու
համար անխտիր ամէն գործ, ա-
մէն շարժում, օգտակար թէ փա-
սակար, մեղադրելի թէ արդարա-
նալի, բա՛ւ է որ, կուսակցութեան
մը ձեռնարկն ըլլայ այն:

Խմբագրութիւնը կը մերժէ բը-
նականաբար իրեն հաղորդուած
գրութիւններու երկար շարք մը.
հոս կը սկսի չարիքը եւ թիւրի-
մացութիւնը թերթին նկատմամբ:
Մերժուած գրութեան հեղինակը
եւ իր համախոհներ, հակառակ
մերժումը արդարացնող բացատ-
րութիւններու, ընդհանրապէս սա-
կարծիքը կը ստանան թէ թերթը
միայն երեւութապէս անկողմնա-
պահ, իսկապէս յարած է այն
կուսակցութեան, որուն դէմ էր
իրենց գրութիւնը:

Բամբասանք, զրպարտութիւն,
հակառակութիւն թերթին դէմ՝
ահա ատոր ալ հետեւանք:

Շատ ժամանակ չիկայ, ազգա-
լից մը բերաւ մեզ վերակազմեա

Հնչակեաններու դէմ գրուած յօդուած մը, ուր Արփիար Արփիարեան կամբաստանուէր թէ հայ ժողովուրդին Մարտի մէջ խորհուրդ տուած է Սուլթանէն սպասել ասկէ ետքը իր բարօրութիւնը և անոր գլխաւորութեան ապաւինելը Մերժեցինք՝ սակայն չի կըրցինք հասկնել մարդուն թէ մեր մերժումին պատճառը ամբաստանութեան անհիմն ու անտեղի ըլլալն է՝ ու այն մեկնեցաւ մեզ վերադարձով ուրիշ թաքուն դիտումներ։

Կուզենք այս առիթով միանգամ ընդ միշտ յայտարարած ըլլալ թէ մենք անկողնակալ մնալ կուզենք չէ թէ ամէն կոնսակցութիւն անպայման հարուածելով, այլ ամէն դարձ, ո՛ր կոնսակցութեան ալ ըլլայ, ազատ և անկախ դատելով, լաւին լաւ և յոռիին յոռի ըսելով։ Կոնսակցական տեսակէտէն բոլորովին հեռի՝ անձնական նկատումներէ զերծ՝ կանխակալ կարծիքներէ ազատ՝ ընթանալ կուզենք այս ճանապարհէն, ուր համոզուած ենք թէ նեցուկ և ընկեր պիտի ունենանք մեր ազգակիցներու մեծամասնութեան համախոհութիւնը։

Թաղ. Խորհրդոյ կողմանէ հետեւեալ հետագիրը ուղղուած է առ մարաշխան արքունեաց։

Վառնա 8 փետր. 1898

Այսօր հանդիսաւոր մաղթանք յեկեղեցւոյ վասն պահպանման կեանաց Ն. Ա. Բարձրութեան իշխանուհի Բլէմինթինի։

Կը խնդրենք Ձեզմէ որ ներկայացնէք մեր սրտագին զգացումներն և անկեղծ բարեմաղթութիւններն Ն. Ա. Բարձրութեանց։

Մարաշխան հետեւեալ պատասխանը տուած է։

Նոցին Արքայական Բարձրութիւնք՝ զգածեալ ձեր փափկանք կատարեցէն կը յանձնարարեն ինձ ձեզ հաղորդել իրենց բարձր շնորհակալութիւնը արտայայտուած զգացմանց համար։

ԱՐԳՈՒՆԵԱՏ ՄԱՐԱՋԱԽՏ
ՊՈՒՐՊՈՒԼՕՆ

ԱՌՕՐԵԱՏ ՏՊԱԽՈՒՊԻԻՇԵՆԵՐ

Սիրելի ընթերցող,

Սրտաւոյդ գէպերով եւ սրբանուէր յիշատակներով բեղուն այս եօթնեկին ո՞ր գէպէն սկսիմ, ո՞ր յիշատակէն։ Ո՞ր գէպը ներկայացնեմ քեզ եւ ո՞ր յիշատակին առջեւ կանգ առնեմ։ Հետեւեալ կեանքին ո՞ր գրուածքը երգեմ եւ անոնց տառապած հոգիներուն ո՞ր ծաղը պարզեմ քեզ, անոնց ճակատին ամէն մէկ կնճիւղը իր պատմութիւնն ունի եւ իր մեկնութիւնը, ու հատորներ պէտք են պատմելու, վերլուծելու համար այդ խրոխտ ու գերբնական էակի կնճիւղները։

Դէպքերը զանց կառնեմ, սիրելի ընթերցող. անոնք յաջորդական կըրկնութիւններն են, իսկապէս նոյն՝ ոչ իրենց ներկայացման ձևերուն մէջ

միայն իրարմէ տարբերող իրողութեանց։

Բայց յիշատակներ՝ ա՛հ, ոչ, անոնց գպչիլ չըլլար, զանոնք մոռնալ չըլլար. անոնք ժողովրդեան մը բարոյական ոյժը կը կազմեն, անոնցմով կը պարծի ընկերութիւնը, անոնցմով ձգտումներուն մէջ։ Վա՛յ այն ազգին որ իր տոհմային պատմութեան մէջ յետադարձ ակնարկ մը նետելով չի գտնել հոն իր ազատութեանը, իր կըրօնքին համար մարտնչող ու նահատակուող լուսապայծառ գէմքերու յիշատակը։ Այն ասեմ, սիրելի ընթերցող, օրինակը դադրելով գրդին ալ կը դադրի, եւ ազգային աղետներու առջեւ, նորանոր զոհողութիւններու հանդէպ յիշատակներով աղքատ այդ ժողովուրդը չունենալով զինքը սրտապընդող բարոյական այդ գերազույց ոյժը, կանճրկի, կը հեծկտայ, կը կքի զինքը հարուածող ձեռքին տակ եւ հուսկ ուրեմն՝ քայքայուած ու փշուած իր գոյութեան մէջ, վատաբար եւ առանց ընդլուծման, կ'անհետ պատմութեան հորիզոնէն, լքելով զինքը ծեծող ձեռքը։

Ազատութեան հերոս մըն էր Լէվոքին ալ զոր օտնեցին Պուլկարները՝ մին այն վեհափառ ու մեծահոգի հերոսներէն որոնք կը պատարասեն աղբի մը փերկութիւնը, որոնց արիւնը ծծող հողը ազատութեան ծիլի կարճակէ։

Սարգսաւազ՝ իր կրօնաւորին սքեմին ներքեւ, նշխարքի եւ մատուցի տեղ, յեղափոխութեան գաղափարը կը ցըրուէր իր ժողովրդին մէջ, ուսուցիչ՝ դասարանին չորս պատերուն մէջ ազատութիւն կը քարոզէր։ Որտեղ մը հանգույն գոռացող իր ձայնը կը թափանցէր լուսաղբ հոգիներուն խորը, կը յուզէր ու կը խռովէր զանոնք եւ կողեւորէր այդ խեղճուկ շինականները։ Առիւծի մռնչիւնն էր սր արձագանք կուտար լեռնէ լեռ, հովիտէ հովիտ, անոր համար թերեւս զինքն անուանեցին Լեւսի՝ առիւծային կամ առիւծասիրտ, եթէ կուզէք։

Տեսա՛յ եւ իր փառաւոր յիշատակաւորը, Սօֆիայի ամէնէն գեղեցիկ քառուղիներէն միոյն կեդրոնը կանգնուած, հոն ուր՝ սրունքէն վերաւորուած՝ բռնուկացաւ եւ կախուեցաւ։ Պատկառում հիացումի սարսուռ մը անցաւ ամբողջ մարմնոյս վրայէն, անզգալարար ձեռքս զլխարկիս տարի եւ երկիւղած յարգանքով մը խոնարհեցայ յիշատակին առջեւ այդ մեծ մարդուն՝ որուն ոսկորները հանգչելու տեղ մը ունէին իր պաշտած ու փրկած հայրենիքին մէջ։ Եւ Պուլկար ընկերս հըպարտ հաճոյքով մը կը լափէր այն համր հիացումը զոր իրենց մեծ յղափոխականը կը ներշնչէր ինձ։

Ա՛հ, այն ասեմ, մոռնալով ու սաստիկ նախանձէ մը բռնուած՝ զարձայ ընկերոջս եւ կոչաւ ու կոպիտ շեշտով մը երեսին նետեցի ոս բառերը. «Պարո՛ն, մեր հին եւ ժամանակակից պատմութիւնը կը վիտայ Լեւսքիի նմանող հոյակապ անձնաւորութիւններով, եւ եթէ յիշատակարաններ կանգնել հարկ ըլլայ օր մը, հաւատացէ՛ք որ մեր... մայրաքաղաքը նեղ պիտի գայ։» Չըսի որ մինք, հայերս, իրար զիրար պիտի բզկտենք օր մը, նոյն լսկ մեր հերոսներուն յիշատակարաններ կանգնելու գործին մէջ։

Առիւծ մըն ալ ա՛յն էր, Վարդան Մամիկոնեանը, առիւծներուն առիւծը, որուն խնկալի յիշատակը պիտի տօնենք վաղը։ Հայրենիքի ու կրօնքի այդ անմահ ախոյեանը մեր պատմու-

թեան, ըսե՛մ արդեօք, աշխարհի պատմութեան ամէնէն փառաւոր էջը կը գրաւէ։ Ո՞վ չի ճանչնար անվերջ դորավարի եւ անձնուրաց մարտիրոսի այդ հոյակապ գէմքը։

Որքա՛ն աւելորդ պիտի ըլլար պատմել հոս շահատակութիւններն այդ մեծ մարդուն որուն անունն ու յիշատակը կերպեն ամէն հայ շրթներ միանուագ, օրորոցէն մինչեւ գերեզման։

Երգել, սակայն, նմանիլ ըսել չէ, եւ մեր հանրային գործիչները պէտք չունին օտար ազգերու պատմութեան դիմելու՝ հոգալով մեծութեան եւ անձնագիտ համար, եթէ ճշմարտագէտ ու անկեղծ հայրենասէրներ ենք, եթէ իրապէս ժողովրդեան ազատագրութեան համար աշխատողներ ենք, եթէ անոր ազապալ փրկութեանը կազմակերպողներ ինք, ջանա՛ք վարդաններու օրինակէն նշնչուիլ, անոնց ապրած կեանքովն ապրիլ, անոնց հօգին վերլուծել եւ այդ մաքուր, անապակ մթնոլորտին մէջ փնտռել ու գտնել այն տարրերն որոնք ժողովրդեան մը կեանքը կը շինեն։

Գիտնանք եսին զոհաբերութեամբ սիրցնել ժողովրդեան եւ անոռաց պահել անոր սրտին մէջ մեր գիւցազներուն, մեր նահատակներուն քաղցր յիշատակը. հայր անո՛վ միայն կապրի ու կրնայ ապրիլ սակաւին։ Մոռնալ ազգային յիշատակները, անտարբերութեամբ վերաբերուիլ դէպ ի անոնց՝ կը նշանակէ, հայուն համար մահաւանդ, չապրի՛լ։

ԹՂԹԱԿԻՑ

ՊԱՆԴՈՒԹՅՆ ԱՌԼՈՒՍԻՆ

Լուսնն, լուսին, ինչո՞ւ այդպէս թախծալի կը պըտըտի վերայ կապոյտ երկընքին, Միթէ դո՞ւ ալ ունիս ցաւեր վըտալի։ Հայաստանի նրման, որ լայ արտադին։

Կեցի՛ր, կեցի՛ր, Հայոց լուսնակ գեղեցիկ, Քեզ պիտի տամ ես մի աւանդ սիրական, Դու տա՛ր զանի իմ սիրելի հայրենիք, Սըղազգեցիկ ու վշտահար իմ մօրկան։

Երբոր տեսնես զանի զըրան մէջ նըստած Մըխիթա՛րէ զինքն ու լսէ. «Գու որ զիդ թէ եւ պանդուխտ ու ամէն տեղ հաւաքուած, Բայց իւր սիրտը միշտ մօտիկ է քու կնիդ։»

Երբոր անցնիս Հայոց լեռանց Վրասնէն Ու ձայն լըսես հառաչանքի սըրտմուծութեան, Ո՛հ, մի՛ փախչի՛ր, սփոփէ զանոնք որ վայեն

Առաւօտեան արշալուսիդ ցօղերով Նահատակաց գերեզմանները թըրջէ՛, Ու քու ազօտ եւ մթնասուեր չողերով Հայաստանի աւերակները չըրջէ՛։ Ա. ԴԵՐԵՆԻՆ

ԷԶՄԻԱԾՆԻԳԱՆՁԱՐԱՆԻ ԳՈՂՈՒԹԵԱՆ ՀԵՐՔՈՒՄԸ

Բիւզանդիոն կը հրատարակէ պատճենը նամակի մը զոր էջմիածնի Սինոգի անդամ և գանձապահ Տ. Աշոտ վարդ. Շախնանց ղրկած է Կ. Պոլսոյ Ս. Պատրիարքին հերբելու համար էջմիածնի 200,000 ռուպլին գողութեան լուրը։ Նամակը բաւական երկար ըլլալով, չենք կրնար զայն ամբողջովին արտատպել և կը բաւականանանք անոր մէկ ամփոփումը գինեկով այս տեղ։

Նամակագիրը գողութեան լուրը ծայրագոյն չարամտութիւն և անլուր զրպարտութիւն անուանելէ և անոր հեղինակը Աստուծոյ երկիւղէն և մարդկային ամօթէն լուրկ յայտարարելէ ետքը՝ կըսէ թէ անհնար էր որ այդ գողութիւնը պատահէր, որովհետեւ գանձարանը ապահով վիճակի մէջ և Սինոգի օրինական խիստ և զգուշաւոր հսկողութեան տակ կը գտնուի ու ամէն ամիս կը քննուի Սինոգի անդամներուն և լրօքուրօրին ձեռքով։ Ասկէ վատ Տ. Վահան վարդապետ զոր Բիւզանդիոնի թղթակիցը իբր գողութեան մասնակից կամբաստանէր, արդէն մէկ տարիէն աւելի է որ գանձապահութեան պաշտօնը չի վարեր։ Գանձարանին բանալին երկու չէ, ինչպէս կըսէր ամբաստանութեան հեղինակ թղթակիցը, այլ մէկ հատ է ու կը գտնուի վեհ. կաթողիկոսին քով և դուռը միշտ կը կնքուի Սինոգի պաշտօնական կնիքովը։ Գանձարանը կը բացուի Սինոգի բոլոր անդամներուն ներկայութեամբ, յետոյ կը կղզուի, կը կնքուի ու բանալին կը յանձնուի Ս. Հայրապետին։

Տ. Աշոտ վարդապետ կուեցնէ թէ երկու վարդապետներու կողմէս սահմաններէն դուրս արտաքսուել, և Պ. խորէն խրիմեանի էջմիածնէն բացակայութիւնը ուրիշ պատճառներէ առաջ եկած են ու չէ թէ պատահած գողութեան մը կասկածէն որ բնու տեղի ունեցած չէ։ Մայր աթոռին գանձապահ հայր սուրբը իր հերքման գիրը կը վերջացնէ խնդրելով Ս. Օրմանեանէն զայն հրատարակութեան տալ Կ. Պոլսոյ բոլոր հայ լրագիրներուն մէջ ի գիտութիւն ազգայիններու։

ԲՈՂՈՔ ՄԸ

Սօֆիանակ ազգային մը, ոսկերիչ Տ. Կարապետ Դուրմուշեան, նամակ մը գրելով մեզ՝ սաստկապէս կը բողբոքէ սեղիւն թաղ. խորհուրդին դէմ հետեւեալ դէպքին համար։

Սօֆիայի ոստիկանապետ յայտարարութեամբ մը կազդարարէր քաղաքին օտարահպատակներուն թէ իրենցմէ իւրաքանչիւրը իր կառավարութեան կամ անոր ներկայացուցիչ հիւպատոսարանէն արուած անցագիր մը կամ բնակութեան արտօնագիր մը ունենա-

լու է իր քով եւ թէ մինչեւ փետր. 10 այս ազգարարութեան չհամակերպող օտարահպատակը պիտի արտաքսուի Պուլկարիայէն:

Թուրքիոյ ֆոլիսարիան անցագիր կամ արտօսութիւնը առնել փափագող Հայերէ կը պահանջէ բերել մէյմէկ վրկայական իրենց ազգ. իշխանութիւնէն տրուած:

Նամակագրին եղբայրը այսօրինակ վկայական մը ձեռք բերելու համար կը դիմէ թաղ. խորհուրդին որուն առնակեալը անկէ կը պահանջէ 20 ֆրանք: Մարդը այդպիսի գումար մը հասուցանելու անկարող, կը ստիպուի դիմել պուլկար բողոքականներու պատուելիին որ ձրիապէս կուտայ խնդրուած վկայականը:

Նամակագիրը կը յարէ թէ Սօփիայի թաղ. խորհուրդը միշտ բաղմապահանջ եղած է այսպիսի առիթներու մէջ իրեն դիմող ամէն ազգայիններու հանդէպ: Օրինակի եամար անցեալ տարի երբ հայ գաղթական բժիշկներէ ոմանք պէտք ունեցան վկայականի, խորհուրդին ատենապետը պահանջեց իւրաքանչիւրէն քառասունական ֆրանք եւ անողոր միաց իր այս պահանջու մին մէջ: Բժիշկներուն նիհար քաակին համար ամանելի չէր բնոր ու անոնք ստիպուեցան քաղաքապետութենէն առնել իրենց վկայականները, իւրաքանչիւրին համար միայն 5—6 ֆրանք ծախսելով:

Անկողմնապահութեամբ կը հրատարակենք այս տեղեկութիւններ որոնք եթէ ստույգ են՝ կը ցուցնեն թէ թաղ. խորհուրդին այս ընթացք կրկին անպատեհութիւն ունի, որ է գոռաբուծիւն, զրկանք առթել չունեւորագրակիցներու եւ միւս կողմէ ազգ. անտուկին հասոյթներուն վնասել:

Պատ. խորհուրդին ուշադրութիւնը կը հրաւիրուի:

ԼՐԱՔԱՂ

Հոր Դարէն կիմանանք թէ Տ. Գրիգոր Զանչեանի ձեռնբեցութեամբ ինպատ չբաւար Հայերու հրատարակուած Եղիսայիական Օգոստոսեան անուն գեղեցիկ հրկին վաճառումէն գոյացած է 23,603 ռուպ., ծախք եղած է 7000 ռուպ. հետեւապէս զուտ հասոյթն է 16603 ռուպ.: Հաւաքածոյն յանձնուել է արդէն երկրորդ ապագրութեան, որ լոյս պիտի տեսնէ չուրջ երկու ամիսէն:

Կը յուսացուի որ երկրորդ տըպագրութիւնը աւելի մեծ ընդունելութիւն պիտի գտնէ, որովհետեւ նշանաւոր գրագէտներ եւ բարձրատիճան պաշտօնեաներ, որոց մէջ նաեւ նախարարներ եւ ձայնաւորներ իրենց շնորհակցութիւնը կը յայտնեն այս ձեռնարկին:

— Վեհ. Կաթողիկոսը կը շարունակէ իր տեսակցութիւնները կովկասեան կառավարչապետութեան գլխաւոր ներկայացուցիչներուն հետ: Վերջին այցելութիւնը, զոր Կաթողիկոսը տուած է կառավարչապետ իշխանին՝ տեւեր է երեք ժամ: Կույէ այս տեսակցութիւնները առնչութիւն ունենան այն լուրին հետ թէ Կաթողիկոսի գաղտնական շրջանակի հոգա-

բարձուն կրթական նախարարութեան հրաւերով Բէթէրսպուրկ պիտի ելլի մասնակցելու մէկ քանի գաղտնական Դանդիներու քննութիւնը: Հաւանականաբար այդ խնդիրներէն մէկն է ռուսահայ վարժարաններու խնդիրը:

Վերջին լուրերուն համեմատ վեհ. Կաթողիկոսը արդէն մեկնած ըլլալու է Թիֆլիսէն՝ Բաքու կրթարար համար:

— Մոսկուայի կոյսերական մեծ թատրոնին դերասանական խմբին անդամ հայազգի տաղանդաւոր արուեստագէտ Տ. Բէկլար Ամիրճան նուագահանգէս մը տուած է նոյն քաղաքին մէկ քանի հանրաժանութիւններու եւ դերասաններու մասնակցութեամբ:

Նուագահանգէսը, որուն ներկայ էր նաեւ հայ հասարակութիւնը վայելուչ համեմատութեամբ, փայլուն յաջողութիւն մը ունեցաւ:

— Մոսկուայի Գեղարուեստական ընկերութեան այս տարուան նկարի ցուցահանգէսին մասնակցած են իրենց նկարներով երեք հայ նկարիչներ, Տէրաք Թադէոսեան, Ալաճալեան եւ Նա. հապետեան:

— Մեր հայրենակից Տ. Օսքար իսթէնտէր, խմբագրապետ Սօփիա հրատարակող Գուրիէ տէ Պալգան անուն ֆրանսերէն թերթին, տնօրէն անուանուած է նորահաստատ Պուլկարական Հեռագրական Գործակալատարութեան:

Տ. Օ. իսթէնտէր իր թերթը կը թողու ուրիշ տնձի մը, որ մտադիր է զայն հրատարակել շաբաթը երկու անգամ, պուլկարիէն եւ ֆրանսերէն լեզուներով:

— Կը հազորդեն մեկ թէ Մանչէսթրի առաջնակարգ հայ վաճառականներէն Տ. Յակոբ Կիւմիւշեան Լոնտոնի գոտտարանին երգուեալ գառաւոր անուանուել է, շատ պատուարեր պաշտօն մը, որուն համար մեր խնդակցութիւնը կը յայտնենք պատ. ազգակիցին:

— Պուրկաղէն կը գրեն թէ Կաթ. այցելու հովիւ հայր Արսէն վարդապետ վեհունի տեղին խաղութեանց վերջ տալու համար նախ թաղ. խորհուրդի մը ընտրութիւնը կատարել է: Ընտրուած է նոյնպէս հոգաբարձութիւն մը: Յուսանք որ նորընտիր պաշտօնական մօրմիները լուրջ, անկողմնակալ եւ շրջահայեաց գործունէութեամբ մը պիտի յաջողին կարգ կանոն մտցնել Պուրկաղի ազգ. գործերուն մէջ, որոնք երկար ժամանակ մատնուած էին այնքան ողբալի վիճակի մը:

Տեղին Տ. Սահակ քահանայն, որ կուսակցութիւններէ մէկուն ատենութեան առաքիլայ եղած էր, խաղաղութեան սիրոյն համար ինքնակամ հրաժարել է պաշտօնավարութենէ եւ Պուրկաղէ գացել է փ. Պօլիս՝ հակառակ իրեն համակրողներուն փափաքին եւ ընդդիմութեան:

Հայր Արսէն վեհունի նոյնպէս մտադիր է մօտ օրեր երթալ նոյն քաղաքը:

— Բիւզանդիոն կիմանայ թէ Մ. Հայրապետը 50 օսմ: սակի արժուութեամբ մատանի մը նուէր զըրկած է Պալաւիտի կառավարիչ Ճէպպար պէյի իբր նշան շնորհակալութեան այն գովելի հոգածութեան համար, զոր ան ունեցել է հայ եկեղեցիներու եւ դըպրոցներու նկատմամբ: Ն. Օժուլիւնը նոյն պէս խաչ մը զըրկած է Պալաւիտի առաջ. փոխանորդ Տ. Ներսէս քահանայ Գալաբերունիի ի վարձատրութիւն անոր բազմաշան գործունէութեան:

— Կ. Պօլսոյ կրօն. ժողովը Ս. Կաթողիկոսի քանի մը վճիռներէն բարի օրինակ առնելով ամուսնալուծման որոշում մը տուաւ՝ վերջապէս ամուսնանալու արածներով Ալլէհիբի Ստեփանեան Եղիա անուն ազգայինը, որուն կինը կըրօնափոխութեան դիմած ու օտարազգիի մը հետ ամուսնանալով զաւակներու տէր եղած է:

— Յունուար 17էն սկսեալ Պալլէքսիբի մէջ տեղի ունեցած երկրաշարժի ցնցումներ, որոնք կը կրկնուին աւելի կամ նուազ ժամանակամիջոցներով, քաղաքը աւերակ դարձուցին: Շրջակայ գիւղերու մէջ ալ երկրաշարժէն բաղձալի շէնքեր փլած են: Շէնքերու տակ մնալով մեռած են մօտ 30 հոգի: Վերաւորուածներուն թիւը քառասուորի կը կարծուի: Քաղաքին ժողովուրդը բացթողնալ տեղեր կը բնակի, ցուրտն եւ բուքին նշաւակ: Ժողովուրդին մէջ տիրող սարսափը աննկարագրելի է:

Հակառակ Պօլսէն եւ Պալլէքսիբի մօտ տեղերէ զրկուած նպաստներուն, ժողովուրդը շատ կը նեղուի հոցի նուազութենէն: Հոցի կարօտ միայն Հայերու թիւը հազարի կը մօտենայ, որոնք տաղաւարներու ներքեւ առժամայ մատուցուած հաստատած եւ վարժարան մ'ալ բացած են: Կեղբ. կառավարութիւնը կը ջանայ կարօտեանքը պէտքերը հագալու. անոնց համար բացուած հանգանակութեան գումարը ցարգ հասած է 90,000 զուրուշի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կերեւայ որ Անգլիա ծածուկ գործելով անշուշտ պիտի յաջողցնէ չինական փոխառութեան խնդիրը: Պեղիկեթ Թակիսլար յայտնեց թէ Բրիտանական կառավարութիւնը թէեւ վերջերս Զինատանի գործերուն մէջ վերապահ եւ անգործօն դիրք մը բռնած ըլլալ կը ձեւացնէ, սակայն գաղտնաբար ամէն միջոց կը գործադրէ չինական կառավարութեան հետ կնքելու փոխառութեանց սլաքմագիրը, որուն վրայ առ այժմ բան մը չի օսելու հրահանգը տրուած է անգլիական զինուոր թերթերուն: Տեղի Թեղեկրափ ալ կը ծանուցանէ թէ փոխառութեան բանակցութիւնները յաջող ելք մը ունեցել են եւ թէ քառ ժամանակ պիտի հրա-

տարակուի փոխառութեան պայմանագիրը:

— Այս տարի ձմեռը տեղափոխուած կերեւի այնպիսի երկիրներ, որոնք ցուրտ եւ ձիւն չէին տեսներ ցարգ: Այս կարգէն են Եգիպտոս եւ Թուրքիոյ Պաղատի եւ Մուսուլի նահանգները, ուր ջերմաչափը գէրջէն հինգ աստիճան վար կիջնէ, անապատներու մէջ ձիւնի փոթորիկներ հարկւրներով մարդիկ կը սառեցնեն իրենց անասուններով եւ ցուրտի անվարժ գիւղական կենդանիներ զոհ կերթան կըլիմայի այս նորանշան փոփոխութեան: Ասիական Թուրքիոյ շատ կողմերը ճանրաները անանցանելի դարձան տեղացած մեծաքանակ ձիւնին պատճառով:

— Աւստրիոյ նախկին արտաքին գործերու նախարար Կոմս Գալլեքի մեռաւ:

— Զօլայի դատը շարունակուեցաւ միեւնոյն ժողովրդային յուզումի եւ ցոյցերու մէջ տեղ: Վերջին լուրերուն համեմատ դատարանը արդէն տուած ըլլալու է իր վճիռը գոր սակայն դեռ չկրցինք իմանալ:

— Հնտկաստանի մէջ ժամտախար նորէն երեւան ելաւ, Պոմպայի մէջ մանաւանդ մասնաւոր ուժգնութեամբ: Բռնուողներէն 100ին տասը հազիւ կազատի:

ՎԱՍԻԼ ԼԵՒՍՔԻ

Կէչէն բէնճէնպիսի կիւնիւ վեֆաթընըն եիրմի պէշիմէնի սէնէի տէվրիյէսի իճրա օլունան պուգահրուման Պուլկարըն իսմի պէլքի չօգլարմըլ իշիւն հալէա մեճ. հուլ գալմըլ տըր. հալ պուքի պուլնամ՝ պիւթիւն Պուլկար միլլէթի. նին չէրէֆ ու շանը, պիւթիւն Պուլկար թօրրաղընըն բուհ ու ճա. նը օլտըլը իշիւն, անըն թէրճէմէի հալի հէման հէր Պուլկարըն զիհ. նինտէ թէմամըլլա բէսմ օլուն. մըլ տըր:

Ֆիլ հագըգա վասիլ Լեւսքի կի. պի արսյան եիրէքլի պիր գահ. բամանըն թէրճէմէի հալինի օգու. յուպ տա գալպինտէ պիր հէյեճան, տամարլարընտա պիր ճէվէ. լան հըսս իթմէմէք ինսան իշիւն գապիլ օլումալ: Անըն թարիխի հայաթընտա հէր քէս իշիւն իս. թիֆաուէ իտիլէճէք նօգլթար վար տըր:

Թահսիլ իթմիշ օլտըլը ուլում վէ ֆիւնուն՝ կէօղէրինի հագըգաթ ըլըլընա բէք չաբուգ աշ. մըլ օլտըլընտան, օ ըլըլը քէս. տիսինէ բէհպէրի հարէքթ իթ. թիլալ իտէրէք, գալպինի պիւ. թիւն գուվլէթիլէ իշիւն աթըլ. մըլ վէ մէնսուպ օլտըլը միլլէթին ֆէլաթէթ վէ մահվիյէթ ուշաւու. մըլըն թա քէնարընա եազլաշմըլ օլտըլընը կէօրտիլինտէն, գանընըն սօն տամլասը ազընճայա գա. տար, կէօյսիւնին սօն նէֆէսի չըլընճայա տէյին, մէյտանը մու. հարէպէտէ տէօյիլւմէյէ վէ իս. թիլալ պայրաղընը գալտըրարագ պիւթիւն միլլէթտաշարընը վա. թան ուղուընա ֆէտաի ճանա տալլէթ իթմէյէ գարար վէրմիշ տըր:

Օ գէմանլար, Պուլկար միլլէ.

Թինտէ հիւքմ' իտէն ճէհալէթին տէրէճէսի մալիւս տիր :

Պէօյլէ պիր միլլէթի ուլանտըր մագ, հագգ վէ վազիֆէ ֆիքիւր լէրինի էօյրէթմէք, վաթան վէ միլլէթ տուլիսլարընը, զիհինլէր տէ եհլէշտիրմէք բէք գօլայ շէյլէր օլմատըղընտան, լիւսքի իպ թիտաի էմրտէ էֆքեար վէ հըս սիյաթընըն թաամիմ վէ նէշընէ բէք չօգ կիւճլիւք չէքմիշ իսէ տէ, սօն սօնու կալէպէ քէնտիսինտէ գալմըշ վէ հէր քէսի քէնտի ֆիքրի հուրիլէթբէրվէրանէսինէ մէֆթուն իթմիշ տիր :

Հէլէ գահրամանլըգլարընը տուլուպ տա թիւլլէր իւրբիւրմէք գապիլ տէյիլ տիր : Պիւթիւն թիւրք վահշիլէրի արասընա տէհշէթ սաշմըշ վէ թիւրք հիւքիւմէթինին քէնտիսինտէ պուլմագ իչիւն իճրա իթտիյի թէհարբիյա թը ուզուն միւտտէթ սէմէրէսիք պըրագմըշ տըր :

Լաքին պիշարէ Լիւսքի՝ պու գատար ճահտար, պու գատար կայրէթլէր իլէ պէրասպէր՝ ճանըն տան զիյատէ սէվտիյի միլլէթինին էսարէթ բէնչէսինտէն գուրթուլտըղընը կէօրմէյէ մուվաֆֆագ օլմամըշ տըր : Թիւրք հիւքիւմէթի պու գահրաման տէլիգանլըճը նիհայէթ էլէ կէշիւրէք, շիքեալընը բէնչէսի ալթընտա լօգմա լօգմա բարշալայան ճանապարհար կիպի պիր չօգ էգիլէթլէրէ, իշքէնճէլէրէ գուրպան իթտիքտէն սօնրա, օ էլէ ալուճա սըլմայան արսանը տար աղաճընա չըգարմայա գարար վէրմիշ տիր : Լիւսքի պու գարարը տուլընճա, թիւրք լէրին գանլը էլլէրիլէ էօլմէքտէն իսէ, քէնտի քէնտիսինտէ մահվ իթմէյի թէսապիւր իտէրէք, չ պըսիւնէ տիվարընա պաշընը վուրա վուրա հայաթընա խաթիմէ չէքմիշ վէ օնտան սօնրա էմրի ալի եհլէրին պուլմագ իչիւն Լիւսքի տար աղաճընա չէքիլմիշ տիր :

Վասիլ Լիւսքինին թարիխի հայաթընը թէճամըլայա գալմէ ալմագ՝ պիր գաշ քիթապ տօլուսը եազը եազմագ տէմէք օլմագ տըր քի, պունա կազէթամըլըն սիւթունլարը միւսաիտ տէյիլ տիր : Սնճագ, պու միւնասէպէթլէ միլլէթիմիլին հալը հազըրը հագգընտա պիր իքի սէօլ սէօյլէմէք իսթէրիլ :

Միլլէթիմիլի պէշ հիւք սէնէլիք պիր էսարէթտէն գուրթարըպանը եհնիտէն սաատէթի հալէ նաիլ իթմէք ֆիքրիլլէ վիւճուտէ կէլմիշ օլան իսթիլալ ճէմիլլէթլէրինին պաշլարընտա գա՛շ տանէ Լիւսքի կիպի վազիֆէշինտա, թէճըրկալէքեար քիմսէլէր վար տըր : հայաթընը վաթանը ուզուրընա ֆէտայա հազըր կէօրիւնէն վէ միլլէթ, համիլլէթ տուլկուլարը եալընը քէնտիսինտէ վար գանն իտէն ուֆագ վէ պէօյիւք իսթիլալընըրմըլտան գաշը՝ վար տըր քի, տէրէօհտէ իթտիյի վազիֆէնին էհէմիլլէթ վէ գուտսիլէ :

Թինի պիլիյօր : Միլլէթիմիլիին իչի՝ «պէն Հնչակեան ըմ . . . սէն Դրօշակեան սըն . . . » կիպի վահի սէօլլէրէ հէր կիւն հէր սաաթ պիրպիլլէրինին գաֆաաընը եարան չօճուգլար էլինտէ գալմամըշ մըտըր : Պու հալը էսէֆիշթիմալի կէօրիւպ տէ միլլէթիմիլիին պիր կիւն նաիլի սաատէթ օլմագընը իւմիտ իթմէք՝ իսայալ իլէ օղրաշմագ տէմէք տէյիլ մի տիր :

Պիլ պու էօլուն սօնուճու էյի կէօրմէյօրըլ . է՛ն ուֆագ արլուլարընը պիլէ հուտուլի իթթիֆագ վէ մուհապպէթ իլէ օլապիլիւր . հա պէօյլէ պիւլիւք, հէմ կայէթ պիւլիւք պիր արլուլընը վիւճուտէ կէլմէսի՝ պու իթթիֆագալլըք վէ մուհապպէթսիլիլիլէ նա՛սըլ գապիլ օլմագ տըր : Պուլկար միլլէթինին պու կիւն քի հալի հէր իթթիֆագ վէ մուհապպէթ սէմէրէսի տիր : Պունը էօյրէնմէք իսթէյէնլէր՝ վասիլ Լիւսքինին թէրճէմէի հալինի պիր քէրրէ կէօլտէն կէշիւրմէյէ թէնէգըիւ պուլուրտուլար :

Մ Ո Ւ Հ Յ Մ Ի Ս Թ Ա Ր
Պունտան պէօյլէ թարաֆըմըլա կէօնտէրիլէճէք ապօնէ պէտէլլէրինի վէ թէհահիւտիւ մէքթուպլարը մուվապպաթ պիր միւտտէթ իչիւն աթիտէքի ատրէսլէ կէօնտէրմէլէրինի կազէթամըլ ապօնէլէրինտէն վէ մապահաթ կիւլարալընտան խասսէթէն բէճա իտէլիլ :
Г. М. СКОНОВЪ за в. «Иравункъ» Варна.
Եւրօտ
M. Mihan Seonian
pour la Rédaction du journal
„Iravounk“. — Varna.

Տ Ա Ռ Ի Լ Ի Յ Է
Բրէնս ֆերտինանտ հազրէթլէրի, զէվճէսի բրէնսէս Մարի Լուիլ վէ էվլաուր բրէնս Պօրիս իլէ պէրապէր մարտ ալընըն սօնլարընտա Բէթէրսպուրիկա ազիմէթ վէ օրատա պիր հաֆթա գատար իգա մէթ իտէճէլլէր տիր :
Բրէնս հազրէթլէրի Բէթէրսպուրիկտանալմէթ իթտիքտէն սօնրա, Գարատաղ բրէնսինի զիյալէթ իտէճէյի վէ պու սուրէթլէ իքի հիւքիւմէթ արասընտա պուլընան տօսթըլա պիր գաթ տահի գուլվէթ վէրիլէճէյի խապէրալընմըշ տըր :
Բրէնս հազրէթլէրի Բէթէրսպուրիկա ազիմէթ իթտիյի զէման վիէննատան կէշէք Աւսթրիա իմբէրաթօրը թարաֆընտան գապուլ խիլէճէք իմիշ :

Աւստրիա իլէ Պուլկարիա արասընտա պուլուճան կէրկիւլիւր միւնասէպէթիլլէ, պու սօն հալմատիս էհէմիլլէթտէն խալի կէօրիւնիւր իսէ տէ, վիէննատան թէպլիլ օլունան պիր թէլէկրաֆա կէօրէ, վալիտսինին խասթալընտան տօլայը պիր գաշ կիւնտէն պէրի վիէննատա պուլընան բրէնս ֆերտինանտ Աւստրիանըն խարիճիյէ նազըրը գօնթ կօլալտօլիսին իգամէթկեահընա կիտէրէք գարթընը պըրագմըշ օլտըղընտան, իմբէրաթօր ֆրանց Եոզէֆ իլէ

բրէնս արասընտա եագընտա եէնիտէն տօսթլուք հասըլ օլմագըլ իւմիտ իտիլմէքտէ տիր :

Բրէնսէս Գլէմանթինին խասթալըլը միւնասէպէթիլլէ բրէնս ֆերտինանտըն Սօֆիատան վիէննայա կիթտիլինի պունտան էվվէլ եազմըշ ըտըլ :
Բրէնսէս Գլէմանթին ագ ճիլէր իւֆունէթինէ միւլթէլա օլմուշ օլտըղընտան, վիէննա տարիլֆիւնունընէն էն պէօյիւք թապիպլէրի թարաֆընտան թէտալի իտիլմէքտէ տիր :

Սօֆիատա Բէրար Բուսէֆ նամ պիր Պուլկար գարընըն իւշ էրքէք էվլատ տիւննայա կէթիւրմիշ օլտըղը Պուլկար կազէթալարը եազըյօրըր : Պու չօճուգլարըն էպէվէյի սօն տէրէճէ սէֆալէթ վէ գալուրէթ իչինտէ օլտըլարընը Բրէնս հազրէթլէրի խապէրալարագ, քէնտիլէրինէ իյանէ օլագագ 200 ֆրանք գատար պիր մէպլաղ կէօնտէրմիշ տիր :

Սթանպօլ թիւրք կազէթալարընտա օգունտըղընա կէօրէ, Բրէնս հազրէթլէրի թարաֆընտան ալիլիլ նազըրը Ապտիւրահման բաշա իլէ պահիլիլ նազըրը Հիւսէյին բաշայա Սէնդ-Սէքսանտր նիշանընը պիւլիւք մուրասա գօրտօնը իհտա օլունմըշ տըր :

Պու սէնէ ապիլ 1տէ Սօֆիատա սազըր վէ տիլսիլ չօճուգլարա մախսուս պիր մէքթէպ ալըլաճագ վէ պու մէքթէպ՝ Հայտէլպէրկ տար իւլ ֆիւնուճը մուլլիմիլէրինտէն Բրօֆէսէօր Ֆերտինանտ Ուրպէլին թահթը իտարէնիտէ պուլունաճագ տըր : Մ. Ուրպէլի պիր սէնէտէն պէրի Պուլկարիատա պուլունտըլը հալտէ Պուլկար իսանընը էյիլճէ թահսիլ իթմիշ տիր : Պու մէքթէպին իսանըրէս միսի Պուլկարա օլմագըլ կիպի, բէսիմ տէրսի, տօլարմաճըլըք վէ սաիլ բէք մուհիմ սէնտաթլար տալի թէտրիս իտիլէճէք տիր :

Մալիյէ նէգարէթի սէնաաթլարա մախսուս եհնի պիր վէրիլի նիգաֆիւմմէսի հալըրալմագտա իմիշ :

Տաիլիլիյէ նէգարէթի պիր իւննամէ նէշըլլէ, Պօմպալ կիպի եուլուրճագտան մուսապ օլան մահալլէրտէն կէլէճէք վաբօրլար իչիւն Պուլկարիա լիմանլարընը գաբալը օլտըղընը իսթար էյլէմիշ տիր :

Սօֆիա պէլէտիլէսի թարաֆընտան թէրթիպ օլընան բիանգօ պիլլէթլէրի չէքիլմիշ վէ էն պիւլիւք իքրամիլիլ թէշըլի իտէն 15,000 ֆրանք՝ 17,730 նիւմէրօյա իսապէթ իթմիշ տիր :

Մ Ի Թ Ե Ն Ե Վ Վ Ի Է

Սէլանիյէ իքի քիլօմէթրօ մէսէֆէտէ տօգուլունճը ասըրտան գալմըշ պիր թաշ պուլունմըշ տըր :

Պու թաշ Բուսէպ պիր թարիլիսի համիլ պուլունտըղընտան, Սէլանիլին քէնտիլէրինէ ալիտ օլտըլը միւլալաաալայա Բուսէպ արասընտա պիւլիւք պիր հէյէճան հիւքմ իթմէյէ պաշլամըշ տըր : հալպու քի տիկէր ճիհէթտէն էսկի Պուլկարիանըն Սէլանիլի գատար միւլթէտ օլտըղընա պու թաշ պիր տէլիլ ատտ օլունտըղընտան, պու քէշֆին Սէլանիլ Բուսէպըլայա Պուլկարլարը արասընտա պիր խալի կիւրիւլթիւլէրի մուհիպ օլտըղընը էվրօրա կազէթալարը եազըյօրըր :

Մ. կլատաթօնըն պիր միւտտէթտէն պէրի խասթալտըղը մալիւս տիր : Պու ճէսուր իհթիյարըն վիւճուտընտաքի սաղլամըլ՝ խասթալըղընա եհնիտէն կալէպէ իթմիշ տիր : կէշէն սալը վէ չարշէն պիհ կիւնլէրի կիւնտէ իքի տէֆա արապա իլէ կէզմէյէ չիգմըշ վէ բօլիթիգա իչլէրինտէ քէնտիսիլլէ հէմէֆքեար օլմայանլար պիլէ խասթալըղընտան տօլայը քէնտիսինէ պէյանը էսէֆ իթմիլլէր տիր :

Սրպիսթանըն սապըք բէիսի վիւքէլասը վէ գրալ Միլանըն սալտըք տօսթը Սվէդմիլի Նիգօյալիլիլ գարիպէն Ալթինայա սէֆիլ նասապ իտիլէճէյիլ վէ պունտան մագսատ՝ Եունանիսթան իլէ Սըրպիսթան արասընտաքի տօսթլուլը պիր գաթ տահա գուլվէթլէտիլէրէք, Պուլկարիանըն Մակեդոնիատա օլան պազը էֆքեարընա մանի օլմագտան իպարէթ օլտըղընը թաւն կազէթասը եազըյօր :

Պապը Ալի կիրիտ ուտասընա քէնտի թարաֆընտան պիր նամզէտ կէօսթէրէմէյէճէյիլ վէ մուվագգաթ պիր վալինին ինթիսապ վէ թայինի իչիւն տէվլէթլէր թարաֆընտան իտիլէճէք թէրիլլէրէ պէլլէյէճէյիլ պիլտիլմիշ տիր :

Սօն վազըթլարտա Սըրպիսթանըն բօլիթիգա իչլէրինտէ բէք պիւլիւք իւրմմէթլէրի սէպգաթ իթմիշ օլան Միքաէլ նամ մէշհուր մէթրօրլիս՝ պու տէֆա վէֆաթ իթմիշ վէ ճէնազէ ալայընտա քէնտի նամընա հազըր պուլունմագ իւզրէ Բուսիա իմբէրաթօրը թարաֆընտան Պէլկրատ մասլահաթկիւլարընա էմր վէրիլմիշ տիր :

Տ Ե Ս Ս Ա Ն Ե Ի Գ Ո Ր Ծ Ն Ա Կ Ա Ն Գ Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ն
Պոշկարեքեկ յեզուրի

Պուլկարեքէն սորվիլ փափագողները՝ առաջնորդ ունենալով իրենց սոյն քերականութիւն՝ կրնան վեց ամսուան մէջ կարգալ գրել և խօսիլ : Կը ծախուի ֆ. Պօլիս, թըղթալաճաւ թագաւոր Գ. Հինտլիանի մօտ :

Գինն է՝ ընտիր կազմ, հրահանգներու բանալին մէկտեղ, 6 լէվ. թղթակազմ, առանց բանալիի 4 լէվ. առանձին բանալին 60 սանթիմ :

Միծաքանակ գնողներուն մասնաւոր զեղչ կըլլայ :